# ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ 20 ՏԱՐԵԿԱՆ Է

Ապրիլի 24-ին լրացավ Հայաստանի չեմպիոն, միջազգային գրոսմայստեր Կարեն Ասրյանի ծննդյան 20 տարին: Ընթերցողները նկատած կլինեն, որ անցյալ տարվա նոյեմբերին Սանկտ Պետերբուրգում կայացած Չիգորինի հուշամրցաշարում ունեցած հարաբերական անհաջողությունից հետո, տաղանդավոր շախմատիստն արդեն մոտ կես տարի է, ինչ հանդես չի գալիս մրցաշարերում, եթե չհաշվենք արագ շախմատի Հայաստանի առաջնությունը: Սակայն մոտ ապագայում արդեն Կարենն ստիպված է խորասուզվել շախմատային իրադարձությունների հորձանուտը: Երկու օր հետո նա (ինչպես նաեւ Հայաստանի բազմակի չեմպիոններ Վլադիմիր Հակոբյանը, Սմբատ Լպուտյանը եւ Աշոտ Անաստասյանը) կմեկնի Դուբայ՝ մասնակցելու Շեյխի գավաթ կոչվող միջազգային մրցաշարին: Դա նախապատրաստական փուլ կլինի հունիսին Երեւանում մեկնարկելիք աշխարհի առաջնության փնջային մրցաշարից առաջ: Սրտանց մաղթենք, որ Հայաստանի չեմպիոնը տիրանա խաղարկվող 4 ուղեգրերից մեկին: Նշենք, սակայն, որ անհաջողության դեպքում Կարենը եւս մեկ հնարավորություն ունի այդ իրավունքը ձեռք բերելու: Այս տարի նա վերջին անգամ կխաղա մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունում, որի հաղթողն էլ հենց կարժանանա աշխարհի «Նոկաուտ» առաջնության միակ ուղեգրին: Հիշեցնենք, որ այդ մրցաշարը եւս կանցկացվի Երեւանում, սեպտեմբեր ամսին:

Լուսանկարը՝ ԱՇՈՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ



**Կարեն Ասրյան**

Ջերմորեն շնորհավորելով մեր շախմատային հույսերից մեկի՝ տաղանդաշատ գրոսմայստեր Կարեն Ասրյանի ծննդյան 20-ամյակը, մաղթում ենք նրան քաջառողջություն եւ ստեղծագործական լուրջ նվաճումներ՝ ի փառս հայկական շախմատի հետագա զարգացման: